## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2024 թվականի N 730-Ա

## ԱՆՈՒՇ ԳԱԳԻԿԻ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել այլ վճարումներ: Հայաստանի Հանրապետության«Հարկային օրենսգրքի» 10-րդ հոդվածի համաձայն հարկման օբյեկտ է հանդիսանում ցանկացած գործարք, եկամուտ, գույք, գործունեության տեսակ (այդ թվում՝ գործողություն կամ գործառույթ) կամ ցանկացած այլ օբյեկտ, որի առկայությունը կամ որի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը կամ որի կատարումը, Օրենսգրքին համապատասխան, հարկ վճարողի մոտ առաջացնում է հարկի հաշվարկման կամ վճարման պարտավորություն: Ալավերդի քաղաքի Ջրավազան 40/32 հասցեի բնակիչ, քաղաքացի Անուշ Գագիկի Ներկարարյանը հանդիսանալով հարկման օբյեկտ հանդիսացող գույքի սեփականատեր չի վճարել գույքահարկի վճարը, որի արդյունքում գոյացել է 529.452 (հինգ հարյուր քսանինըհազար չորս հարյուրիննիսուներկու) ՀՀ դրամ: Ելնելով վերոգրյալից՝

**որոշում եմ.**

1. Անուշ Գագիկի Ներկարարյանից (հասցեն՝ ք. Ալավերդի, Ջրավազան 40/32) գանձել 529.452 (հինգ հարյուր քսանինը հազար չորս հարյուր իննիսուներկու) ՀՀ դրամ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գումարը ենթակա է վճարման Ալավերդու համայնքապետարանի բյուջեի 900265121047 հաշվեհամարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ստացման պահից հետո՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշման 2-րդ կամ 3-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում այն կդառնա անբողոքարկելի վարչական ակտ և գումարը կբռնագանձվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**